

րին, իր անձը շինաշէտով հավատքի ու հայրենիքի պաշտպանության համար: Հովհաննիսի կաթողիկոսի մերձավոր աջակից Ղևոնդ Երեցը, որ հայ հոգևորականի լավագույն տիպարն է հանդիսանում, Վարդանանց շարժման ժամանակ ցուցաբերեց անսպառ եռանդ ու կազմակերպչական մեծ տաղանդ: Ղևոնդ Երեցի ու Վարդանի անունները շաղկապված են միմյանց. շնայած սրանցից մեկը զինվորա-

կան էր, իսկ մյուսը հոգևորական, բայց միևնույն սերը հավատի ու հայրենիքի հանդեպ իրար է ձուլել այս երկու հերոսական անունները:

Վարդանանք ու Ղևոնդանք անմեռ են... դարեր են սահել ու անցել և դեռ կանցնեն, բայց նրանց մղած պայքարը օտար բռնակալների դեմ հավետ չի մոռանա հայ ժողովուրդը:

ՌՈՒՐԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

(III դասարանի սան)

Վ Ա Ր Դ Ա Ն Ա Ն Ք



Ռուբեն Մարտիրոսյան

Հայ ժողովուրդը իր անցյալի դարավոր ազատագրական պայքարի ընթացքում հայրենիքի ու հայրենի եկեղեցու անկախության համար մարտնչող բազմաթիվ հերոսներ է ունեցել, բայց դրանցից և ոչ մեկի անունն այնպես չի անմահացել, ինչպես Վարդան Մամիկոնյանին:

451 թվից սկսած մինչև մեր օրերը հայ ժողովուրդը ազատագրական պայքարի մեծ ուղի է անցել և այդ պայքարի ընթացքում փառքի դափնիներով պսակված քաջարի հերոսների մեջ միշտ էլ տեսել է անմահ Վարդան Մամիկոնյանի վեհ ու հիասքանչ կերպարը:

Վարդանանք մեռան, հավետ ապրելու համար. ինչպես Նղիշեն է ասում՝ «Մահն ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն է: Որ զմահ ոչ գիտէ՝ երկնչի ի մահուանէ, իսկ որ գիտէ զմահ, ոչ երկնչի ի նմանէ»: Վարդանանց պատերազմը մի անվեհեր գոյամարտ էր մահվան դեմ, հանուն վեհ գաղափարի, հանուն հայրենի սրբությունների պաշտպանության: Վարդանի մեջ մարմնացած ենք տեսնում մարտնչող հայ ժողովուրդը, ժողովուրդ, որի մոտ երբեք չմարեց պայքարի ու ազատագրության տենչը, ժողովուրդ, որ երբեք չհաշտվեց օտար բռնավորների տիրապե-

տության հետ: Վարդանանք իրենց մահվամբ հաղթանակ ապահովեցին: Ավարայրի ճակատամարտից որոշ ժամանակ անց, երբ տեղի ունեցավ երկրորդ կրոնական պատերազմը, հայերը խրախուսված Վարդանանց օրինակով պատերազմի ելան Վահան Մամիկոնյանի զխափորությանմբ և պարտության մատնեցին պարսից բանակը: Այս հաղթանակը հայերի է բերեց կրոնական ազատություն և ինքնուրույնություն:

Դարեր անցան... պարսիկ աշխարհակալներին փոխարինեցին նոր թշնամիներ՝ արաբ նվաճողները, որոնք շատ բռնություններ ու անիրավություններ գործեցին, բայց հայ ժողովրդի ըմբոստ ոգին ընկճել չկարողացան: Թեոդորոս Ռշտունին, Խուլթեցի Հովնանը և շատ ուրիշները, ոգեշնչված Վարդանի սխրագործությամբ, բազմիցս հաղթանակ տարան անարդ թշնամու դեմ: Արաբական տիրապետության ժամանակը շրջանում հայ ժողովուրդը հերոսական պայքարի նոր դրվագներ է ստեղծում. այդ պայքարը արտացոլված ենք տեսնում «Մասունցի Դավիթ» ժողովրդական էպոսում. հանձինս Դավթի հայ ժողովուրդը պատկերել է իր հերոսական ընդվզումը արաբական բռնակալների դեմ: Դավթի կերպարում մարմնավորված ենք տես-

նում հայ ժողովրդի հավաքական ուժն ու պայքարը: Դավիթը դա ինքը մարտնչող հայ ժողովուրդն է, որը երկարատև պայքար է մղել օտար բռնակալների դեմ: Արարների դեմ մղած պայքարի ընթացքում Վարդանի կերպարը դարձյալ ոգեշնչել, սխրագործությունների է մղել հայ հերոսներին:

Պայքարի նույն ըմբոստ ոգին ենք տեսնում նաև Կիլիկիայում, ուր Թորոսը, Լևոնը և շատ ուրիշները, բազմիցս ջախջախելով եգիպտական մամլուկներին, ազատություն ու անկախություն են նվաճում: Այստեղ էլ կիլիկյան հայ հերոսների համար ոգեշնչման աղբյուր են հանդիսացել նույնպես Վարդանանք:

Կիլիկյան հայ պետության անկումից հետո շմարեց անկախության տենչը հայ ժողովրդի սրտում: 18-րդ դարում Սյունեցի Դավիթ Բեկը պայքարի ելավ պարսից բռնակալության դեմ: Դավիթ Բեկի քաջերը եկեղեցում Ս. Ավետարանով ու խաչով երգվեցին Վարդանի դագաղի առաջ, որ հայրենիքին չեն դավաճանի ու անարգ թշնամու դեմ կմարտնչեն այնպես, ինչպես Վարդանն էր մարտնչել:

19-րդ դարի սկզբում, երբ հայ ժողովուրդը մեծ Ռուսաստանի օգնությամբ Հայաստանը մաքրեց սարդաբներից ու խաներից, հայկական զինների գլուխն անցած, «Հայրենյաց պաշտպան» Ներսես Աշտարակեցին իր հայրենասիրական խրախուսիչ քարոզներով ոգեշնչում էր հայ մարտիկներին, ոգեկոչելով Վարդանին ու մյուս քաջերին:

Քսաներորդ դարում գերմանական հորդաները Սովետական Միություն ներխուժելով խախտեցին մեր մեծ հայրենիքի սրբազան սահմանները: Ոտքի ելավ սովետական հզոր

ժողովուրդը ու ահեղ մարտի բռնվեց թշնամու հետ: Հայրենական Պատերազմի այդ ահեղ մարտերին մասնակցեցին նաև հայ ժողովրդի պանծալի զավակները, որոնք մարտի դաշտերում անհաշիվ սխրագործություններ գործելով անմահ փառապատկ հյուսեցին հայ ժողովրդի համար: Այս անգամ էլ, ինչպես միշտ, հայ մարտիկները ցույց տվին, որ իրենց քաջարի նախնիքների՝ Վարդանանց,

Սասունցի Դավիթի ու մյուս քաջերի ոգին անմեռ է:

Վարդանանց պատերազմից անցել է գրեթե 15 դար, սակայն ժողովուրդը չի մոռացել իր հերոսներին: Հայ եկեղեցին սրբաքրեց Վարդանանց նահատակներին և դարերից ի վեր տոնում է Վարդանանց զորավարաց և 1035 վկայից տոնը:

Հայ ժողովուրդը իր փորձության ժամերին միշտ հետադարձ հայացք է նետել Ավարայրի ճակատամարտին ու ոգեկոչել իր հերոս նախնիքներին՝ Վարդանին, Դևոնդ Երեցին ու մյուսներին, ոգևորվել նրանցով, ներշնչվել նրանց հայրենապետ դադափարներով:

Վարդանանք նահատակվեցին հայ-

րենյաց վեհ դադափարների համար ու հավերժ անմահացան, իրենց անունը շողշողուն փառքով պսակելով:

Վարդանանք ապահովեցին Հայ եկեղեցու անկախությունն ու հարատևությունը և ինչպես Ներսես Շնորհալին է գրում,

«Եկեղեցիք Հայաստանեայց պայծառապէս զարդարեցան Ունելով միշտ բարեխօս զգեցուցիւն վարտի սոցա»:



Վարդան զորավար